

«Հոգեբանությունը և կյանքը» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի գիտական հանդեսների ցուցակում՝ համաձայն ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի 17.12.2001 թ-ի նիստի որոշման (արձ. N25)՝ դոկտորական և փեկնածուական առեմախոսությունների համար

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ

ПСИХОЛОГИЯ И ЖИЗНЬ
PSYCHOLOGY AND LIFE

1-2
2008



ի
-
Տ
Ա
Լ
Ը
Ի
Ի
Ղ
Ի
Ե,
Ն
Ղ:
ի
Ի
Ի
Ն,
Ի
Ի-
Ի-
ր
ն
Ղ:
ի
Լ-
Ի-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐԻԱՆԱ ԱԿԵՏԻՅԱՆ ՕՃՏԿԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՅՄԱՅՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ	3
---	---

ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

ՀՐԱՆՏ ԱԿԱՆԵՅԱՆ, ՀՐԱԶՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՍԱՀԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԴԱԿԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՈԳԵԱՆՏՈՐՈՇԻՉ ՀԱՍԱԿՈՂՄԱՆԻ ՄՈԴԵԼԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՆԽՆԴԻՐԸ	9
---	---

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	13
ԱԼԻՆԱ ԳԱԼՍՅԱՆ ՀՈՒՅՁԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԿԱՊԸ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՄՈՏ	17
ԳԵՂԻՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՌԵՍՈՒՍՆԱԿԱՆ ՊԱՏԱՌՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՅԱԿՈՂ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ, ԴԻՂԱԿՏԻԿ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	22
ԼԱՌԻԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆՈՐ ՄԻՋԱԿԱՅՐՈՒՄ ԵՐԵՎԱՅԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՁԵԿԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	30
ԴԱԿԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 12-16 ՏԱՐԵԿԱՆ ՇՆԽՄԱՏԻՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴՐՈՊՊԱՏՃԱՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	36

ԱՆՁԻ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՂԻԳԻ ՊԱՊՈՅԱՆ ԱՆՁԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՒՄԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏՈԼԵՐԱՆՏ ԴՐՄԵԿՈՐՈՒՄՆԵՐԸ	41
ЛИЛИТ БАГДАСАРЯН ИЗМЕНЕНИЯ ЛИЧНОСТНЫХ ПРОЯВЛЕНИЙ В ПРОЦЕССЕ ПЕРЕХОДА ОТ СОСТОЯНИЯ СОЦИАЛЬНОЙ ДЕЗАДАПТАЦИИ К СОЦИАЛЬНОЙ АДАПТАЦИИ	46
ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ ԱՄՈՒՆԻՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՆՀԱՍԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ԴՐՄԵԿՈՐՈՒՄՆԵՐԸ ՔՍՏ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԵՏՏԿԱԾ ՏԻՊԵՐԸ	53

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԱ ՆԿՈՏՈՒՄՅԱՆ ՕՐԿԱՆՈՒՄԻ ՑԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՏՈՐ ԳՈՐԾՍՈՒՈՒԹՅԱՆ ԿՐՄԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	57
ԽԵՐԱՆ ԱՆԻՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ ԲՈՒՅՁՈՒԿԱՆ ԱՏՈՐՈՒՆԵՐԻ ՅՈՒՆԻՍԿՈՒՆԵՐԻ ԸՆԴՈՒՄ	59
ՄԱՐԻՆԵ ԿՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ ԿՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԱԿՐ ԶԵ ԱՆՁԻ ԱՆՊԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՑՈՒՑՆԵՐԸ	65

ԴԱՎԻԹ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

12-16 ՏԱՐԵԿԱՆ ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՏՈՒԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Բնութագրելով սպորտի հոգեբանության ժամանակակից վիճակը և նրա կիրառական ներուժը կարելի է փաստել, որ կա կուտակված քավականաչափ նյութ սպորտսմենների հոգեբանական պատրաստվածության աշխատանքները առավել ամբողջական ու արդյունավետ կազմակերպելու համար:

Սպորտային գործունեության հետևողական ուսումնասիրման համար մախ և առաջ անհրաժեշտ է քննարկել Գ. Վ. Սուխոդոլսկու կողմից կատարված գործունեության հոգեբանական տեսությունների դասակարգումը: Հետևելով այդ դասակարգմանը սպորտային գործունեության հետազոտություններում՝ կարելի է առանձնացնել երկու հիմնական ուղղություն.

- համատեսական վերլուծություն,
- սպորտի տարբեր ոլորտների պսիխոգրամմաների և պրոֆեսիոգրաֆիկ բնութագրումների կազմում:

Սպորտային գործունեության ուսումնասիրությունների արդյունքում առաջ է գալիս անձի և գործունեության տարաբաժանում: Սրա հաղթահարման լավագույն ճանապարհ կարող է ծաղրիկովի մասնագիտական գործունեության սիստեմոգենեզի կոնցեպցիան:

Հետազոտությունների մեկ այլ ուղղություն է սպորտային գործունեության դրդապատճառային համակարգի ուսումնասիրությունը: Նրանցում հաստատվում է գործունեության բարձր արդյունավետությանը նպաստող դրդապատճառայնության առավել արդյունավետ ուժը, որը կախված է մարզիկների անհատականու-

թյունից և նրանց կողմից լուծվող խնդիրների բարդությունից, ինչպես նաև ներքին և արտաքին դրդապատճառայնության հարաբերակցությունից: Ապացուցված է, որ արդյունավետ գործունեության մախապայման է հանդիսանում հաջողությունների ձգտման և անհաջողություններից խուսափման միտումների արդյունավետ փոխներգործությունը, քանի որ միայն հաջողության ուղղվածությունը նվազեցնում է սպորտում անխուսափելի պարտությունների հանդեպ դիմադրողականությունը, իսկ անհաջողություններից խուսափման գերակայությունը ծնում է վարքի պաշտպանական մեխանիզմներ, որոնք արգելակում են մարզիկների ինքնաիրականացումը:

Ըստ էության սպորտային գործունեության մեջ դրդապատճառային բլոկը կատարում է հետևյալ գործառույթները.

- հանդիսանում է գործունեության սկսման մեխանիզմ,
- մարզման և մրցակցային գործունեության ժամանակ պահպանում է ակտիվության անհրաժեշտ մակարդակը,
- կարգավորում է ցանկալի արդյունքներին հասնելու համար գործունեության տարբեր միջոցներ օգտագործելու ակտիվության բովանդակությունը:

Սպորտային գործունեության դրդապատճառները ոչ միայն բազմազան են, այլև տարբերվում են իրենց դինամիկ բնույթով, որոնք օրինաչափորեն փոփոխում են միմյանց շարունակական գործունեության ընթացքում:

Ա. Ց. Պունինն առանձնացնում է սպոր-

տային գործունեությունում դրդապատճառների զարգացման հետևյալ փուլերը.

1. Առաջնային փուլում դրդապատճառները բնութագրվում են.

- սպորտային հետաքրքրությունների դիֆուզ բնույթով,
- անմիջականությամբ,
- կախված են միջավայրի պայմաններից, թե արդյոք որ սպորտաձևն է խրախուսվում.

2. Երկրորդ փուլը ընտրված սպորտաձևում մասնագիտացման փուլն է, որտեղ դրդապատճառները բնութագրվում են.

- ուղղորդված հետաքրքրության առկայությամբ,
- սպորտային հաջողությունից հուզական ապրման հազեցվածություն և նրա ամրապնդման ձգտում,
- հատուկ գիտելիքների ընդլայնում, սպորտային տեխնիկայի կատարելագործում:

Դրդապատճառները դառնում են առավել միջնորդավորված, տեղափոխվում են սպորտային գործունեությունից նրա արդյունքին որոշակի հաջողության, հաղթանակի:

3. Սպորտային վարպետության փուլում առաջ են գալիս հետևյալ դրդապատճառները.

- պահպանել սեփական սպորտային վարպետությունը, հասնել առավել մեծ հաջողությունների,
- սեփական ձեռքբերումներով օրինակ ծառայել,
- նպաստել տվյալ սպորտաձևի զարգացմանը, հարստացնել գոյություն ունեցող տեխնիկաների և մեթոդների համակարգը:

Այս փուլում սպորտային գործունեության դրդապատճառները վառ արտահայտված սոցիալական ուղղվածություն են կրում:

Հաշվի առնելով կատարված հետազոտական աշխատանքները և տեսական վերլուծությունը՝ հատկապես հետաքրք-

րական է դառնում շախմատային գործունեության դրդապատճառային համակարգի կառուցվածքի վերլուծությունը հաշվի առնելով, որ շախմատը, հանդիսանալով յուրահատուկ սպորտաձև, օժտված է որոշակի առանձնահատկություններով, որոնք առավել հետաքրքրական են հոգեբանական վերլուծության տեսանկյունից և թույլ կտան առավել արդյունավետ կազմակերպել շախմատային ոլորտում հոգեբանական ծառայության մի ուղղությունը:

Մեր կողմից որպես հետազոտական ընտրանք առանձնացվեցին դրդապատճառային համակարգի զարգացման երկրորդ փուլում գտնվող պատանի շախմատիստներ, քանի որ այս փուլում առավելապես կարևորվում է դրդապատճառայնությունը նոր գիտելիքների ձևավորման և հմտությունների մշակման համար: Հենվելով մեր նախորդ հետազոտությունների տվյալների վրա (այն է. որ պատանի շախմատիստների ստեղծարար մոտեցումներն առավելապես կապված են նրանց հաղորդակցական ոլորտի առանձնահատկությունների զարգացվածության հետ) մենք նաև փորձեցինք պարզել նրանց դրդապատճառային ոլորտի և հաղորդակցական առանձնահատկությունների փոխկապակցվածությունը:

Ելնելով առաջադրված խնդիրներից աշխատանքի ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

- Ա.Ա. Կարմանովայի կողմից առաջարկված «Նպատակ-միջոց-արդյունք» թեստը, որը հնարավորություն է տալիս պարզելու, թե գործունեության հատկապես որ օղակին է ուղղված անձի ակտիվությունը:
- «Հաջողության դրդապատճառայնություն և անհաջողությունից վախ» Ռեանի հարցարանը: Հաջողության դրդապատճառայնությունը դրական դրդապատճառներին է վերաբերում, իսկ անհաջողություններից վախը՝ բացասականներին:

- Անձի շփվողականության մակարդակի չափման Ռյախովսկու թեստը, որը թույլ է տալիս պարզել անհատի շփվողականության մակարդակը:
- Սթեֆանոնի հարցարանը, որը թույլ է տալիս ուսումնասիրել իրական խմբում մարդու վարքի վեց հիմնական միտումներ կախվածություն, անկախություն, շփվողականություն, մեկուսացում, պայքարի ընդունում, պայքարից խուսափում:

«Նպատակ-միջոց-արդյունք» մեթոդիկայի տվյալները հետազոտական խմբում նշում են առավել արտահայտված հետևյալ միտումները.

- Ըստ նպատակային գործոնի առաջադրվող նպատակները ոչ միշտ են հիմնավորված, անկայուն են: Նպատակի ընտրության դժվարությունների պարագայում հեշտ օգտվում են արտաքին հուշումից, ընդունում են արտաքին նպատակը: Որպեսզի իրենց պատրաստեն ինչ-որ գործունեության, միշտ պահանջվում է կամքի ուժ.
- Համաձայն միջոցին ուղղված գործոնի նկատվում է օպտիմալ արդյունք: Ազատ են միջոցների ընտրության հարցում: Բավական արտահայտված է էներգետիկ ներուժը, ագրեսիվ չեն, սակայն մաս կոնֆորմ չեն.
- Արդյունքին ուղղված միտմամբ նույնպես նկատվում է օպտիմալ արդյունք: Որպես կանոն՝ հետազոտվողները բավականին սթափ գնահատում են իրենց գործունեության արդյունքները: Անաչառ գնահատում են այլ մարդկանց և իրադարձությունները: Անձնային աճը դիմամիկ է:

«Հաջողության դրդապատճառայնություն և անհաջողությունից վախ» Ռեանի հարցարանի տվյալները ցույց են տալիս, որ հետազոտվողների սոստ առտահայտված է հաջողության դրդապատճառայնությունը: Այս դեպքում մարդու ակտիվությունը հիմքում է ընկած հաջողության հույ-

սը և հաջողության հասնելու պահանջմունքը: Մարդը այս պարագայում համոզված է իր ուժերին, պատասխանատու է, նախաձեռնող և ակտիվ:

Ռյախովսկու թեստով ստացված հետազոտական խմբի արդյունքները վկայում են, որ խմբում արտահայտված է շփվողականությունը: Խմբի անդամները հետաքրքրասեր են, սիրում են արտահայտվել տարբեր հարցերի շուրջ: Մարդը այս պարագայում սիրում է լինել ուշադրության կենտրոնում, հաճույքով ծանոթանում է նոր մարդկանց հետ: Պակասում է համբերատարությունը և քաջությունը լուրջ խնդիրների բախվելիս:

Ստեֆանոնի թեստի տվյալները վերլուծենք ըստ երեք գործոնների.

- Կախվածություն-Անկախություն: Առավել արտահայտված է կախվածության բևեռը: Կախվածության միտումը պայմանավորում է անհատի ձգտումը ընդունելու խմբային ստանդարտները և արժեքները:
- Շփվողականություն-ոչ շփվողականություն: Այս գործոնի ցուցանիշներում գերակայում է շփվողականության բևեռը, որը վկայում է խմբում և դրանից դուրս հուզական կապերի ձևավորման ձգտումը:
- Պայքարի ընդունում-պայքարից խուսափում: Խմբում այս գործոնի ցուցանիշները գտնվում են միջինի սահմաններում, որը, ըստ հեղինակի, խոսում է այս ոլորտում առկա ներքին կոնֆլիկտի մասին:

Այս միտումներից յուրաքանչյուրն ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնութագրիչներ:

Ստացված տվյալները մեր կողմից ենթարկվեցին երկրորդային մաթեմատիկական վերլուծության:

	Նպատակ	Միջոց	Արդյունք	Ռեանիթեստ	Ռյախոսվածություն	Կախվածություն	Անկախություն	Շփվող	Ոչ շփվող	Պայքարի ընդունում	Պայքարից խուսափում
Նպատակ		0.37	0.11	0.19	0.28	0.41	-0.24	-0.07	0.41	-0.10	0.57*
Միջոց			0.26	0.74*	-0.18	0.02	0.45	0.24	0.36	-0.28	0.27
Արդյունք				0.41	0.23	0.30	-0.31	-0.43	-0.21	-0.42	0.30
Ռեանիթեստ					-0.01	-0.11	0.23	0.11	0.39	-0.53	0.49
Ռյախոսվածություն						0.32	-0.73*	-0.26	-0.06	-0.08	0.37
Կախվածություն							-0.25	-0.17	0.19	-0.22	0.37
Անկախություն								0.46	0.26	0.09	-0.37
Շփվողական									-0.03	0.42	-0.08
Ոչ շփվողական										-0.47	0.28
Պայքարի ընդունում											-0.63*
Պայքարից խուսափում											

Թեստային տվյալների կորելացիոն վերլուծության ամփոփ աղյուսակ (n=14, $\alpha \leq 0.05$)

Ստացված կորելյացիոն գործակիցներից առանձնացնենք նշանակալի և մեր հետազոտության համար առավել կարևոր համահարաբերակցությունները:

Առկա է նշանակալի դրական կորելյացիոն կապ դեպի գործունեության միջոցի և հաջողության դրդապատճառայնության գործոնների միջև (0.74, n=14, $\alpha \leq 0.05$): Սա վկայում է, որ խմբում առկա հաջողության դրդապատճառայնությունը փոխապայմանավորվում է արտահայտված էներգետիկ ներուժով և դեպի գործունեության միջոցին ուղղված ակտիվությամբ:

Հաջորդ հակադարձ փոխկապակցվածությունը առկա է Ռյախոսված շփվողականության և Ստեֆանսոնի անկախության գործոնների միջև: Սա բավական հետաքրքրական է այն առումով, որ խմբի անդամների մոտ ինչքան բարձր է արտահայտված խմբային շփվողականության գործոնը, այնքան ավելի անհատը կախված է խմբային նորմերից և արժեքներից:

Հաջորդ երկու նշանակալի կորելյացիոն կապերը առկա են պայքարից խուսափման և նպատակի ու պայքարի ընդունման գործոնների միջև:

Պայքարի խուսափման և ընդունման հակադարձ փոխկապակցվածությունը ինքնին հասկանալի է, որը պայմանավորված է Ստեֆանսոնի թեստի կոնստրուկտային վալիդությամբ՝ որպես հակադարձ փոխապայմանավորվող որակներ:

Մեզ համար առավել հետաքրքրական է գործունեության դեպի նպատակին ուղղվածության ուղիղ կորելյացիոն կապը պայքարից խուսափման գործոնի հետ: Առաջին հայացքից փոքր-ինչ տարօրինակ այս փոխկապակցվածությունը իր բացատրությունն է գտնում, երբ վերադառնում ենք նրան, որ հետազոտական խմբում «պայքարի ընդունում-պայքարից խուսափում» գործոնից առկա է ներքին կոնֆլիկտ: Փաստորեն, այս որակի արտահայտվածությունը խմբում ենթակա է

հետագա զարգացման դեպի պայքարի ընդունման բևեռ:

Ընդհանրացնելով նշենք, որ մեր նախկին հետազոտություններից ելնելով՝ բարձրկրեատիվ անձնավորությունները օժտված են զարգացած միջանձնային հաղորդակցական դաշտով: Այս հետազոտությունը ցույց է տալիս, որ զարգացած հաղորդակցական դաշտն իր հերթին սերտ փոխկապակցված է գործունեության միջոցին և արդյունքին ուղղված դրդապատճառների զարգացման որոշակի մակարդակի և հաջողության դրդապատճառայնության հետ: Սակայն առավել թույլ է արտահայտված ուղղվածությունը դեպի

նպատակը, որն էլ, իր հերթին, փոխպայմանավորված է «պայքարի ընդունում-պայքարից խուսափում» վարքային ռազմավարության ոլորտում առկա ներքին կոնֆլիկտային իրավիճակի հետ:

Այս եզրակացությունը մեզ հուշում է, որ երիտասարդ շախմատիստների գործունեության արդյունավետության դրդապատճառավորման և բարձրկրեատիվ արդյունքների ստացման աշխատանքները հիմնականում պետք է ուղղվեն «պայքարի ընդունում-պայքարից խուսափում» վարքային ռազմավարության ներքին կոնֆլիկտի լուծմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бабушкин Г. Д., Мельников В. М., Общая спортивная психология. Омск: СибГАФК, 2000, 192 с.
2. Батурын Н.А., Психология успеха и неудачи в спортивной деятельности. Омск, 1988, 48 с.
3. Пилоян Р.А., Мотивация спортивной деятельности, М., 1984, 104 с.
4. Психология спорта высших достижений, под ред. А.В. Родионова, М., ФиС, 1979, 144 с.
5. Чикова О.М., Психологические особенности спортивной деятельности и личности спортсмена: Учебное пособие для училищ Олимпийского резерва, Мн., ИПП Госэкономплана РБ. 1993, 76 с.
6. <http://psy.1september.ru/articlef.php?ID=200401204> — Шахматы и лотерея.

МОТИВАЦИОННАЯ РЕГУЛЯЦИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ 12–16 ЛЕТНИХ ШАХМАТИСТОВ

Д. Айрапетян

В статье обсуждаются основные особенности мотивационной сферы личности в рамках спортивной деятельности. Параллельно выделяются основные стадии развития мотивационных факторов. Более подробно анализируются мотивации в стадии специализации в выбранном виде спорта.

Взаимосвязь и взаимозависимость мотивационных факторов с коммуникативной сферой и поведенческими стратегиями личности особо подчеркнуты автором. Анализ результатов и окончательные выводы основаны на экспериментальном исследовании 12–16 летних шахматистов.

MOTIVATIONAL REGULATION OF CHESS PLAYER'S ACTIVITIES

D. Hayrapetyan

The peculiarities of the motivational system within the framework of sport activities are the main focus of the article. Simultaneously, the evolution and main phases of the motivational factors, as well as the evaluation of alternative tendencies on the specialization level of the chosen sport activities are especially distinguished within this context.

The interrelation and mutual dependence of communicative and behavioral strategies with the motivational factors mentioned above, are especially emphasized by the author. The analysis and final results are based on the example of 12–16-year-old chess players.